Դրամաշնորհային հաշվետվություն N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ
Դրամաշնորհի N	1032-11002/23 ՇԱ
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	03.01.2023-31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	03.01.2023-31.12.2023
Ներկայացման օր	12.01.2023
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Կարինե Կուրղինյան Ծրագրի համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում իրականացրել է խնամքի ծառայություն՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված 28 շահառուների համար: Յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է անհատական խնամքի պլան՝ ելնելով վերջինիս կարիքների առանձնահատկություններից, որի համաձայն էլ իրականացվել է խնամքի տրամադրումը:

Խնամքի ծառայությունները տրամադրվել են խնամվողի տանը՝ որպես համալիր սոցիալ-առողջապահական ծառայությունների համախումբ՝ նպատակ ունենալով ապահովել որակյալ, անհատական կարիքներին համապատասխան, արժանապատիվ աջակցություն, որը նպաստում է խնամվողի սոցիալ-առողջական վիճակի բարելավմանը:

Յուրաքանչյուր խնամվողի համար խնամք տրամադրող անձնակազմը ունի տնայցերի ժամանակացույց, որը կազմվում է խնամառուի կարիքների գնահատման արդյունքում ավագ բուժքրոջ կողմից և հաստատվում՝ խնամքի ծառայության համակարգողի կողմից: Յուրաքանչյուր այցի ժամանակ խնամք տրամադրող մասնագետի կողմից մատուցվող խնամքի ծառայությունների մասին տեղեկատվությունը լրացվում է խնամքի տրամադրման համապատասխան ձևաթղթում:

Ծրագրի շրջանակներում վարվում է էլեկտրոնային շտեմարան, որում գրանցվում են շահառուների տվյալները և ցուցաբերված աջակցությունը: Անձնական տվյալների գաղտնիությունը պահպանվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան:

Ծրագրի համակարգողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է խնամվողներին տրամադրվող ծառայությունների մասնակցային մշտադիտարկում:

Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝

- սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում, ներառյալ խնամքի պարագաների տրամադրում,
- կենցաղային օգնություն և սպասարկում,
- կամավորների այցելություններ,
- սոցիալական աշխատողի այցելություն, գնահատում, ուղղորդում,
- հոգեբանի խորհրդատվություն,
- մշակութային միջոցառման կազմակերպում,
- մոնիտորինգային աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀԿԽԸ կողմից ծրագրի արդյունավետության Շիրակի ՄՄ նախագահի և ավագ բուժքրոջ մասնակցությամբ կատարվել են ամենամյա մոնիթորինգային այցեր տարբեր շահառուների՝ խնամքի որակի և սպասարկող անձնակազմի կատարած աշխատանքների վերահսկողության, ինչպես նաև շահառուների կարծիքները և առաջարկությունները լսելու նպատակով:
Շահառուների դինամիկ հսկողության ընթացքում հայտնաբերված խնդիրներին տրվել է արագ արձագանք, կատարվել են ուղղորդումներ տարբեր բժշկական հաստատություններ, կազմակերպվել վերջիններիս տեղափոխությունը:
Բացի պլանավորված այցելություններից, պարբերաբար հեռախոսակապի միջոցով ծրագրի աշխատակիցները իրազեկ են եղել շահառուների վիճակի մասին և արձագանքել՝ ըստ անհրաժեշտության: Շարունակական են նաև կամավորների կողմից կատարվող այցերը և աջակցության տրամադրումը վերջիններիս համար գնումների կազմակերպման, զրույցի, զբոսանքի, ընթերցանության և այլ հարցերում: Նրանք կարողանում են տնային պայմաններում կազմակերպել գրքի ընթերցումներ, կինո դիտումներ, խաղեր և այլն:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում՝ խնամքը տրամադրվել է բուժքույրերի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Այն ներառել է տեղամասային կամ բուժող բժիշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման, նեղ մասնագիտական խորհրդատվության կազմակերպում: Կարիքին համապատասխան՝ խնամքին զուգահեռ խնամառուները ապահովվել են նաև խնամքի միջոցներով, ներառյալ տակդիրներ, ուռոլոգիական միջադիրներ, տակդիր փռոցներ, վերքերի մշակման համար անհրաժեշտ նյութեր:
- Կենցաղային օգնություն և սպասարկում, ինչը ներառել է անձնական հիգիենայի ապահովում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում՝ ըստ անհրաժեշտության, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Ծառայությունը տրամադրվել է տնային խնամողների կողմից:

• Սոցիալիզացիային նպաստող կամավորների այցելություններ, ներառյալ ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում, այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա:
• Սոցիալական աշխատողի խորհրդատվություն, գնահատում, կարիքի դեպքում նաև՝ ուղղորդում:
• Հոգեբանի խորհրդատվություններ շահառուներին և անձնակազմին: Պարբերաբար կատարվել են խարհրդատվություններ և քննարկումներ բուժքույրների և տնային խնամողների հետ, նաև հեռահար տարբերակով, մասնավորապես հեռախոսազանգերի միջոցով, որպեսզի արձագանքը լինի հնարավորինս արագ:
Յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում կազմակերպվել է առնվազն մեկ միջոցառում՝ ելնելով շահառուների ցանկությունից: Ծրագրի կամավորները և խնամքի անձնակազմը մեծ պատրաստակամությամբ են սպասարկել շահառուներին և փորձել նրանց առօրյան դարձնել ավելի հետաքրքիր և տարբերվող:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը անդամակցում է տարեցների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովին, Տարեցների պաշտպանության ցանցին, որոնց հերթական հանդիպումներին ունեցել է պարտադիր և ակտիվ մասնակցություն: Ծրագրի կարևոր իրադարձությունների, ինչպես նաև շահառուների տարբեր միջոցառումներում մասնակցության մասին պարբերաբար լուսաբանվել է սոցիալական հարթակում ՀԿԽԸ կայքում, որոնց հղումը տրամադրվել է եռամսյակային հաշվետվություններում:

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ չեն առաջացել: ՀԿԽԸ իր բոլոր ռեսուրսներով նպաստել է պայմանագրով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցմանը, նպաստել խնամառուների արժանապատիվ ծերության ապահովմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հայկական կարմիր խաչի ընկերությունը շարունակելու է Շիրակի մարզում իրականացնել տնային խնամքի ծառայությունը, կատարվելու է նոր շահառուների հայտնաբերում և ուղղորդում միասնական սոցիալական ծառայություն՝ ուղեգրման: Խնամքի ծառայությունը իրականացվելու է նույն մեթոդաբանությամբ՝ նպաստելով տարեցների կյանքի որակի բարելավմանը:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում նման գործողություններ չեն իրականացվել: Տարվա ընթացքում ծրագրի շահառուներից շատերը ստացել են նաև սննդի աջակցություն: